ՓՈԽԱԴԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Զանգեզուրը, ինչպես և նրա հարևան Ղարաբաղն ու Մեղրին, Հայաստանի այն վայրերից է, որտեղ լեռնային պայմանները թույլ չեն տվել անցկացնել քիչ թե շատ լայն ուղիներ։ Այստեղ կածանները մեկ բարձրանում՝ մեկ իջնում են լեռների հաճախակի շատ զառիթափ լանջերով՝ անցնելով արագավազ գետերի մեկ ափից մյուսը։ Հարթ և լայնարձակ տարածությունները սակավ են, անցյալում անիվավոր սայլի համար հարմարություններ չէին ստեղծվել։ Սա անիվ չգիտցող աշխարհ էր։ Նույնիսկ գյուղի մոտիկ արտերից հնձածը տեղափոխվում էր գրաստով, կամ հաճախակի շալակով։ Դարեր շարունակ, մինչև ռուսական տիրապետությունն հաստատվելը, տեղափոխությունը կատարվել է բեռնակիրներով՝ էշով, ձիով, ջորիով։ Ջորին առավելապես գերադասելի էր։ Մեծ բեռ չունեցող հեծնողը դիմում էր տեղական թամքին, որն իր ձևով ոչընչով չէր տարբերվում անդրկովկասյան արևելյան գավառներում տարածված թամքերից։ Ունևորները՝ բեկերը, նախկին մելիքները թամքին փռում էին բրդե գունավոր կտորի վրա մետաքսե կամ նույնպես բրդե, երբեմն բամբակե թելով զարդարուն ասեղնագործած ծածկոցներ, բարձր գեղարվեստական ճաշակի գործեր։ Սանձերն ու այլ կաշվե սարքամասերը գեղեցկացնում էին արծաթե և ոսկեզօծած զարդերով՝ իրար հետ մրցելով։

Սակայն արդեն XIX դ. վերջերում այսպիսի թամքերը դարձել էին հազվագյուտ և ավելի երկար պատահում էին Թուրք ազնվականության մեջ։ Աշխատավոր խավերը թե՛ հեծնելիս և թե՛ բեռ բարձելիս օգտվում էին գրեթե միայն փալանավ՝ համեստով։ Փալանի տեղական ձևը աչքի էր ընկնում իր տախտաձև լայնությամբ։ Նրա վրա, բացի երկու կողմից կախված լիքը մաֆրաշնէրից և խուրջինէրից, գյուղացին կարողանում էր տեղավորել իր ամբողջ ընտանիքը։ Լեռնային կածանների վրա սովորաբար կարելի էր հանդիպել հաստատ քայլվածքով արագ քայլող գրաստին, որի փալանի աջ ու ձախ կողմից կապված էին լինում լեցուն մաֆրաշնէր և խուրջինէր. վրան, լայն տախտի վրա, ոտքերը մաֆրաշնէրի վրայով առաջ կախած, բազմած կին, ձեռքին ծրծկեր երեխա, առջևից մի ավելի մեծ երեխա, իսկ ետևից ոտքերն աջ ու ձախ դցած մեկ ուրիշը։ Հայրը գնում էր ոտքով գրաստի սանձից բռնած, զգույշ տանելով կենդանուն վտանգավոր ելևէջների, խորխորատների գլխով։ Բնական է, որ այսպիսի ճամփորդության համար ավելի հարմար էր ուժեղ ոտք և ամուր մեջք ունեցող ջորին, որի լավ տեսակները մինչև վերջերքն էլ ձեռք էին բերվում Արաքսի մյուս ափից, Իրանից։ Լավագույն փալան կարողներն ադրբեջանցի փալանդուզնէրն են։